ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

1857 թ. Մկրտիչ Խրիմյանի կողմից Վարագա վանքում բացած «Ժառանգավորաց» դպրոցի ամենաաչքի ընկնող սաներից է Գարեգին Սրվանձտյանցը։ Նա իր գործունեությունը սկսեց 1850-ական թվականի վերջերին և 60-ականների սկզբին։ Դեռևս աշակերտ, նա սկսում է եռանդում կերպով աշխատակցել «Արծվի Վասպուրականի» հանդեսին։ Մեկը մյուսի ետևից լույս տեսած հոդվածներում՝ «Բուրաստան բարոյական առաքինության» (1858 թ., № 1), «Ինչ որ ցանես զայն կհնձես» (1859 թ., դեկտեմբեր), «Շիրիմք նախնյաց», «Տեսարանք հայրենի աշխարհաց», արտահայտված են երիտասարդ հեղինակի լուրջ խորհրդածությունները հայրենիքի և նրա ապագայի վերաբերյալ։ «Հայրենասիրություն և հայրենիք» հոդվածում հայրենասիրությունը համարելով մարդկային բոլոր զգացումներից ամենասրբազանն ու բարձրագույնը, նա հակադրվում է այդ գաղափարի երկու տեսակի խեղաթյուրումներին։ Առաջինը գավառասիրությունն է, տեղական հայրենասիրությունը, երբ ետին պլան են մղվում համահայկական խնդիրները և կարևեցին աշխատում է Կարինի համար, վանեցին՝ Վանի և այլն։ Մյուս կողմից էլ առևտրա-վաշխառուական բուրժուազիայի ներկայացուցիչները հանդես էին գալիս ընդհանրապես հայրենիքի գաղափարի ժխտումով։ Սրվանձտյանցը դատափետում է այդ գաղափարների շատագովներին, նշում դրանց վնասակար և կործանարար ազդեցությունը։

1862 թ. ապստամբում է Զեյթունը։ Ժողովրդական զանգվածները ոտքի են ելնում պաշտպանելու իրենց ազատությունը, մարդկային արժանապատվությունը։ Զեյթունի հերոսամարտերից քիչ անց Վարագա բարձունքից հնչում է ողջ հայությանը պայքարի հրավիրող, չհուսահատվելու հորդորող և գալիք մարտերին պատրաստ լինելու կոչը. «Սկսենք մեր գործը, նորեն սկսենք»։ «Էն դեհ մի կռիվ կա. կլսե՞ք նախանձավոր, ահավոր ձայներ, ձայն արևմուտքից, ձայն հյուսիսից, ձայն և ամեն կողմից. մի՛, մի՛ սարսափիք, նոքա մեզ քաջություն թող տան»[1]։ Վարագա ուխտի «մարտադիր զինվորը» գիտե, որ նման գործերում միանգամից հաջողության հասնել հնարավոր չէ և որպեսզի չվհատվեն մարտնչող սրտերը, նա շարունակում է իր հորդոր-կոչը՝ կռվելու, զարկվելու և անպայման հաղթելու վճռականություն ներշնչելով ժողովրդին. «Ինկար, վեր կանգնիր, անշուշտ կհաղթես, մեռնիս էլ կհաղթես, վերջապես կհաղթես, վասնզի նոր ես ու լուսավոր ես, բարի ես, ճշմարիտ ես»։

Ըստ Սրվանձտյանցի, հայ ժողովրդի ազատագրության համար պայքարողը պետք է լինի հայ երիտասարդությունը։ Նա հորդորում է հայ երիտասարդներին խորտակել բոլոր որոգայթները, թռչել և անցնել։ Իբրև պատգամ, նա կոչ է անում. «միաբան լինել, միաբան խորհել, միաբան մեռնել, միաբան

---

1 «Արծվի Վասպուրական», 1862—63, № 1։

ապրել։ Միանամք մեք ուրեմն եղբարք, զորություն ի միություն և հաղթություն ի զորություն»[2]։

1862 թ. Սրվանձտյանցը Տարոնում էր։ Այնտեղ նրա խմբագրությամբ լույս էր տեսնում «Արծվիկ Տարոնո» երկշաբաթաթերթը, որի առաջին համարի խմբագրականում հանդիպում ենք այսպիսի տողերի. «Ո՜հ, դու ծնար, դեռ Հայաստան ի ցավս կ՚հեծե»։ «Արծվիկին» վերապահելով «ազատության շունչ և հայրենասիրության բարբառ», երիտասարդ խմբագիրը այս խոսքերով Հայաստանի ազատության խնդիրը դնում էր իբրև օրակարգի հարց։ Տարոնում Սրվանձտյանցի առջև բացվում են սահմռկեցուցիչ պատկերներ։ Ի՞նչ Սահմանադրություն, ի՞նչ թաղական խորհուրդ. ամեն ինչ կատարվում է շեյխերի հրամանով. «Սոքա են քահանայից իշխան և հրամայող»։ Գնդակների արձակում, ընչից ավար, հարյուրավոր հայերի կյանքի ընդհատում, գաղթ, լաց և տառապանք։ Ահա այդ միջոցին է, որ հնչում է Սրվանձտյանցի ձայնը. «Կպարծենա՞ս, թե միամիտ իբրև զաղավնի ես, մեկ աչքդ պակաս է. Ավետարանի հայ, խորադետ ալ եղիր, օձերու կհանդիպես, կխայթեն զքեզ։ Մարդ պետք է առյուծ լինի, գայլերեն չհաղթվելու համար, գառ լինի, յուր երամի հետ վարվելու համար»[3]։

Արծիվյանների եռանդուն աշխատանքը չի վրիպում հայ մեծահարուստների, քուրդ աղաների և կառավարության ներկայացուցիչների աչքից։ Քաղաքական մատնությամբ փակվում է «Արծվիկը»։ Պատրիարքարանի միջնորդությամբ նորից բացվելուց հետո, թերթը դիմում է եզովպոսյան լեզվի. «Բավ է թմրություն, ժամ է առաքինանալ։ իմաստնանալ։ Ո՜վ մարդ, դուն քեզի օգնե, որ Աստվածն ալ օգնե։ Աղվես քուն եղած ժամանակ կարող չէ հավ որսալ. մարդ երազի մեջ չի կարող հաց վաստակել. երկար քնանալու տեղը գերեզմանն է»[4]։ Գրավոր այս քարոզներին զուգակցվում է Սրվանձտյանցի ամենօրյա եռանդուն աշխատանքը։ Նա շրջում է Տարոնի գյուղերը, զրուցում գյուղացիների հետ, ոգեշնչում նրանց, գրի առնում գյուղացիների կրած տառապանքները։ Սրվանձտյանցի ղեկավարությամբ կազմվում և Բ Դուռ են ուղարկվում բողոքի հանրագրեր։

1867 թ. Սրվանձտյանցը կուսակրոնություն է ընդունում և օծվում վարդապետ։ Կրոնավորի վեղարը կրելով, նա առանց արգելքի, շրջում է ժողովրդի մեջ և նրան պատրաստում գալիք հերոսամարտերի։ Եվ նա հայտնվում է մերթ Վանում, ուր իր բոցաշունչ քարոզներով ոգևորում է ժողովրդին, մերթ Կարինում՝ քաղաքային դպրոցի տեսչի և պատմության ուսուցչի պաշտոնում, կիրակնօրյա դպրոց բացած, մերթ էլ Մուշում՝ Ս. Կարապետի վանքի վանահոր փոխանորդ։ Ամենուրեք նա անհաշտ պայքար է մղում հետադիմականների դեմ։

«Մանզումեի էֆքյարի» էջերում Սրվանձտյանցը հանդես է գալիս հայերի հարստահարությունների նկարագրություններով՝ չխնայելով նաև դրանց մասնակցող Մշո մեջլիսի անդամ պետական պաշտոնյաներին։ «Մշեցվոց վրա ընդհանուր տեսություն մը» հոդվածաշարը, որ գրվել էր Հայրիկի անմիջական պատվերով և «մեծ խորհուրդ մը ուներ» լայն արձագանք է գտնում Պոլսի հա-

2 Նույն տեղում։
3 «Արծվիկ Տարոնո», № 3, 1863, մայիսի 1։
4 Նույն տեղում, № 5, հունիսի 1։

յության և կառավարական շրջանակներում[5]։ Թվարկելով Տարոնի հայության կրած հարստահարության համարյա բոլոր դեպքերը, վարպետ գրչով նկարագրելով հայ ժողովրդի անլուր տառապանքները, Սրվանձտյանցը հոդվածում անարգանքի սյունին է գամում համակերպություն և հնազանդություն քարոզող հայ եկեղեցականության ներկայացուցիչներին, որոնք քարոզում էին. «Քրիստոս մեզ համար ասեր է, եթե ոք հարկանե զծնոտ քո, դարձո նմա և զմյուսն և որ կամի հանել զշապիկ քո՝ թող նմա և զբաճկոն քո... Համբերեցեք, օրհնյալ լինիք, Աստված ապաշխարանք համարե, աշխարհս սուտ և անցավոր է, ի՞նչ անենք, Քրիստոս մեզ հրաման չէ տվեր, որ մեր զարնողին զարնենք, մեզ դատողին դատենք»[6]։

Նույն հոդվածում Սրվանձտյանցը կոչ է անում. «Մահը աչք առնել և չթողուլ թշնամւոյն ուզածն ընելու, այնինչ կմեռնին և կսպանվին ամեն ժամանակ շատերը, բայց զուր տեղը, ոչ իրենց կյանքը նշանավոր լինելով և ոչ իրենց մահը պատվավոր և արդյունավոր»[7]։

1869 թ. Մկրտիչ Խրիմյանը ընտրվում է Կ. Պոլսի պատրիարք։ Ուսուցիչը դավառից մայրաքաղաք է տանում արևմտահայության ցավերին դարման գտնելու իր անհուն ցանկությունը, աշակերտը և ուսուցչի մարտադիր զինվորը մնում է դավառում նրա հրահանգները կատարելու։ Պատրիարքի վստահությունը իր «ժիր մշակի» նկատմամբ այնքան մեծ էր, որ նա վարդապետին պաշտոն է տալիս միաժամանակ և՛ Տարոնում, և՛ Վասպուրականում՝ Սուրբ Կարապետում և Վարազում։ Սրվանձտյանցի անընդհատ հրաժարականներին Հայրիկը պատասխանում է կտրուկ մերժումով[8]։

Ի՞նչ էր անելու Տարոնում և Վասպուրականում Խրիմյանի արտահայտությամբ՝ «հեղափոխության զինվորն և նահատակը»։ Նրա հրահանգով Սրվանձտյանցը պետք է մտներ բոլոր մութ խորշերը, հայրենյաց թշվառությունը հաներ լույս աշխարհ, որպեսզի «կույր կառավարությունը տեսնի, թե յուր հպատակաց աղետները ո՞ւր հասած են»։ Միևնույն ժամանակ, 1871 թ. վերջին, 72-ի սկզբին, Վանում Սրվանձտյանցը նշանակվում է սահմանադրության գործադրիչ։ Այստեղ նոր ուժով բորբոքվում է պողոսյան և ապողոսյան պայքարը։ Վերջիններիս՝ այսինքն առաջադիմականների պարագլուխը դառնում է Սրվանձտյանցը. նա անհաշտ և սկզբունքային պայքար էր մղում անպատիժ մնացած Պողոս վարդապետի դեմ։

Իսկ այդ ժամանակ Վանում ազգային կյանքը մեծ խմորումների մեջ էր։ Հարստահարությունների, անլուր տառապանքների, ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի տակ հուսահատված Վանը կազմել էր իր առաջին գաղտնի ընկերությունը՝ «Միություն ի փրկությունը», որին միացել էին նաև շրջակա մի քանի գյուղեր։ Այդ ընկերությունը նպատակ էր դրել առանց միջոցների խտրության ազատագրվել թուրքական լծից։ Սակայն միության աշխատանքներին խանգարեց այն հանգամանքը, որ նրանք որոշել էին ռուսադավանություն ըն-

5 Մատենադարան, ձեռագիր N 4179, էջ 51։

6 «Մանզումեի էֆքյար», 1869, N 902։

7 Նույն տեղում, N 921։ Պատահական չէ այն հանգամանքը, որ 1890-ական թթ., երբ փոխվել էր ցարական կառավարության վերաբերմունքը հայկական հարցի նկատմամբ, ցարական գրաքննությունն արգելում է այդ հոդվածաշարի թեկուզ և ամենափոքր հատվածի տպագրությունը «Արձագանքում» (Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, դ. 179)։

8 ՀՍՍՀ կոլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան։ (Այսուհետև՝ ԳԱԹ), Սրվանձտյանցի ֆ., 2 բ., գ. 449, 456։

դունելու միջոցով աղատվել ատելի լծից։ Գ. Աղանյանի վկայությամբ՝ միության դիմումի վրա կան Սրվանձտյանցի ուղղումները[9], իսկ Սրվանձտյանցի և Խրիմյանի նամակագրությունից տեղեկանում ենք, որ այդ ուղղումները վերաբերում են հենց ռուսադավանություն ընդունելուն։ Շատ հավանական է, որ այդ աղտտագրական առաջին գաղտնի խմբակի գոյությունն իմացել է նաև այդ օրերի Վանի առաջնորդը՝ Պողոս Մելիքյանը, որը պատրաստվում էր կառավարությանը մատնել հայոց պատրիարքին և նրա սանին։ Դրա համար էլ Խրիմյանը զգուշացնում է Գարեգին վարդապետին. «Պողոսը յուր բարեկամաց ձևոռ կպնդե Կարին գալու. յուր ներքին մտադրությունն այն է, որ դատ բանա. թերևս բավական մարդիկ մատնե, ընդ որս գուցե և զձեզ»[10]։

Սահմանադրության գործադրումից բացի, Սրվանձտյանցը այլ գործեր ուներ կատարելու. նա հրահանգներ էր ստացել պատրիարքից. «Քարոզե ժամանակին պահանջաց հառաջադիմությունը։ 2. Խոսիր հայրենյաց աղետների դարմանին համար, խոսիր ազգօգուտ ձեռնարկության համար, խոսիր, որ միանան ու զորանան, խոսիր, որ ազգը և ժողովուրդը սիրեն... 3. Երիտասարդաց խումբը գեայ յուսումնասիրություն, հայրենասիրություն վառե։ Բորբոքե այն կրակով, որ սրտիդ մեջը ունիս՝ «Հուր եկի արկանել», ասա և կրակ տուր. թերևս կարենաս հալել այդ երկրի հավիտենական սառերը»[11]։ Կասկած չի կարող լինել, որ ազգօգուտ ձեռնարկությունը, ազգը և ժողովուրդը փրկելու հրահանգները վերաբերում էին նաև գաղտնի կազմակերպությունների ստեղծմանը։

1873 թ. Խրիմյանը հրաժարական է տալիս պատրիարքությունից. աստիճանաբար նեղանում է նաև Սրվանձտյանցի առօրյա գործունեության բնագավառը։ Նա ևս մեկնում է Պոլիս և զբաղվում գրական գործունեությամբ։ Չնայած գործունեության անձուկ պայմաններին, Սրվանձտյանցը շարունակում է քարոզել իր դավանած գաղափարները։ Սրտի անհուն ցավով նշելով, որ Հայաստանում նույնիսկ գերեզմաններն են կրոնափոխ անում, Սրվանձտյանցը հայացքը հառում է պատմական անցյալին, հայ ժողովրդի ամենահերոսական դրվագներից մեկին՝ Ավարայրի ճակատամարտին, երբ վճռվում էր մեր ժողովրդի լինել չլինելու հարցը։ Մեծ երկյուղածությամբ խոսելով այդ շրջանի մասին, «Շուշան Շավարշանա» պիեսում նա կոչ է անում հայ մամիկներին ու պապիկներին, հայ կանանց ու երիտասարդներին՝ իրենց թոռներին ու երեխաներին կաթի փոխարեն սնել Եղիշեի «աղու մրմունջներով»։ Անցյալը օրինակ դարձնելով ներկայի համար, հայրենանվեր գործիչը մտածում է ժողովրդի ծոցում նիրհած առյուծները գրգռելու և նույնիսկ հայրենի բնությունը թշնամու վրա կատաղեցնելու մասին։ Ըստ նրա՝ «թեպետ հայեր այսօր օտարի մը ձեռքի տակ ենք», բայց դեռ հայ են և քանի որ կենդանի են, ուրեմն պետք է մտածեն աղատվելու մասին։ Իսկ ո՞վ է ազատելու ազգը. «Ազատություն, փրկություն ոչ թագավորի թագին ճաճանչավոր ականց շարքին մեջն է, ոչ գոռ և հուժկու զորապետին ահեղ հրամանին մեջը, ոչ նախարարի մեծության..., այլ այդ սրբազան տարերքը ժողովուրդն է միմիայն»[12]։ Մարդկային հասարակության պատմության մեջ ժողովրդին վերագրելով վերափոխիչ դեր, Սրվանձտյանցը երա-

9 Դիվան հայոց պատմության, գիրք ԺԳ, էջ 553, նաև Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 171։

10 ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., 2-րդ ր., գ. 478։

11 Նույն տեղում, գ. 451։

12 Գ. Սրվանձտյանց, Շուշան Շավարշանա, Կ. Պոլիս, 1911, էջ 56։

զում է այն օրը, երբ բռնավորի կրնկի տակ «վիրավոր, մեջքակոտոր գառնուկը (ժողովուրդը) եղջերավոր խոյ կդառնա և կխորտակի իր դեմ ելնողներին, երբ արծվո ձագերը հզորացած մագիլներով կծվատեն իրենց որսացողներին»։

Ուշադրության արժանի է նաև «Հնոց-Նորոց» ժողովածուում Քեշե Պոլոզրույցը, որ գրի է առել Գ. Սրվանձտյանցը։ Ճիշտ է, դա նրա ինքնուրույն գործերից չէ, այլ ժողովրդական անգիր հերոսապատումներից մեկի գրառումը, սակայն նյութի ընտրությունն իսկ խոսում է գրառողի սկզբունքների մասին։ Այդտեղ պատմվում է հայազգի քահանա տեր Պողոսի ղեկավարած հայերի և եզդի Միրզքի ղեկավարած եզդիների համատեղ մղած ազատագրական կռիվների մասին։ «Մեծամեծք հայոց և եղիգացն ժողովեցան, միաբանեցին հնարս հայթայթել զդեմ առնուլ ահագին և անխուսափելի վտանգին կորստական»[13]։

Ինչպես Վարգան Մամիկոնյանն է ոգևորում իր քաջերին, ներշնչելով նրանց անպայման հաղթելու կամք և վճռականություն, այնպես էլ Քեշե Պոլոն դիմում է իր ռազմիկներին, կոչ անելով՝ ապրելու, հաղթելու կամ կռվելու և մեռնելու։

1870-ական թվականի վերջերին հայ ժողովրդի ազատագրական շարժումները մտնում են նոր փուլի մեջ։ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի՝ ռուսների հաղթական ավարտից հետո միջազգային դիվանագիտության ասպարեզ է մտնում հայկական հարցը։ Ժամանակի պատրիարք Ներսես Վարժապետյանի կոնդակով պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ 1878 թ. ապրիլի վերջին վարդապետներ Գ. Սրվանձտյանցը, Վ. Պարտիզակցին, Ա. Տեկանցը ու Նաթանյանը մեկնեցին Արևմտյան Հայաստան։ Սրվանձտյանցը եղավ համարյա բոլոր հայաշատ վայրերում, ուսումնասիրեց հայ ժողովրդի կյանքը, իբրև ականատես վկա եղավ նրա ծով տառապանքներին և թղթին հանձնեց իր հայտնի տեղեկագրերը։ Իբրև ճանապարհորդական տպավորություններ լույս տեսան «Թորոս աղբար»-ի հատորները։

Գրելով տարբեր վայրերի հայերի հասարակական-քաղաքական կյանքի մասին, Սրվանձտյանցը գառնացած նշում է, որ ազգության ոգին մեռած էր տվյալ վայրի հայության մեջ, երկյուղի և սարսափի ճնշման տակ մոռացվել են մարդկային տարրական իրավունքները. «Եթե այդպես ապրին, լավ է որ չապրին»[14],— գրում է նա Մելիտինե քաղաքի հայերի մասին։ Դրա փոխարեն նա մեծ հաճույքով է պատմում բենկացիների մասին, որոնք քաջությամբ ոչ միայն ազատ ապրում են, այլև սարսափի մեջ պահում Դերսիմի ավազակախմբերին[15]։

Բեռլինի կոնգրեսի արդյունքները չբավարարեցին հայ ժողովրդի սպասելիքները։ Եվ Սրվանձտյանցը իր տեղեկագրում հաղորդում է պատրիարքարանին. «Իմ սկզբունք էր քարոզել, թե օտարեն պետք չէ բան հուսալ, ջանանք մենք զմեզ հոգալ, պատրաստվիլ և ցույց տալ ազգաց, թե մենք ալ ազգ մի ենք. մեր պատմության և մեր հայրենյաց արժանիքը մեր վրա ցուցնել... գիտությամբ զորանալ, միությամբ դիմանալ, գործել և պահպանել մենք զմեզ, պատրաստել մայրեր, հասցունել այրեր, կազմել ընկերություններ, չխնայել

13 Գ. Սրվանձտյանց, Հնոց-Նորոց, Կ. Պոլիս, 1876, էջ 175։
14 Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, հ. 1, Կ. Պոլիս, 1879, էջ 317։
15 Նույն տեղում, էջ 318։

նտին լուման, ղրկել զիրենք և տալ այս նպատակին համար։ Այս է մեր միակ փրկության ճանբան, և ահա այս էր իմ առաքելության ավետարանը»[16]։ Այս նկատառումներից ելնելով էլ նա հայկական հարցի լուծումը կապում է բուն Հայաստանի հետ. անհրաժեշտ է շուտափույթ կանգնեցնել գաղթականությունը և պանդխտությունը, հայերին վերադարձնել Հայաստան, զարգացնել արդյունաբերությունը, դյուղատնտեսությունը, հասնել տեղական ինքնակառավարման. «Հայաստանի մեջն է բուն հայկական խնդիրը և մեք Պեռլինի մեջ կորոնենք զայն»[17]։

Պատրիարքարանի հրահանգով երկրորդ անգամ Սրվանձտյանցը մեկնեց Արևմտյան Հայաստանի գավառները՝ Բ. Դռան կողմից կոմիսեր նշանակված Աբեդին փաշայի հետ միասին, ունենալով բարենորոգումների համար որոշակի ծրագրեր, որոնք նա մտադիր էր ներկայացնել գավառական ժողովներին և տեղական կառավարության մարմիններին։ Ուշադրության արժանի են նրա կազմած վիճակագրությունները և պատրիարքարանին ուղղած նրա տեղեկագիրնամակները։ Զարսանշակի, Բալուի, Զմշկածագի վիճակագրությունները կազմելիս, նա ամենուրեք գրում է ժողովրդի՝ կառավարության նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքի մասին. «Կնեղվին կառավարութենեն, որ փոխանակ աղաներեն զիրենք պաշտպանելու..., ընդհակառակը ինք ևս կկեղեքե և կհարստահարե։ Իսկ զավթիաներեն կրածները խիստ շատ են, որք կքաջալերվին կառավարութենեն»[18]։

Մանրազնին ուսումնասիրելով Տիգրանակերտը, Խարբերդը, որոնք Դերսիմի և Սասնա լեռներով կապված են Բարձր Հայքի, Տարոնի և Վասպուրականի հետ, Սրվանձտյանցը զդում է, որ պակասում են գործիմաց, հայրենասեր անձինք, ժողովրդին առաջնորդողներ. «Մարդ պիտի հոս, մարդ, որ առաջնորդե այս երկրի ժողովրդյան, որ ի լույս ածե ի խավարի և հանդունդս ծածկյալ ազգային թանգերը և զարթուցանե բնակչաց սիրտը. վարե Դերսիմի քաջերը որոնք մոտիկ-մոտիկ մարդ կորոնին, հայ կորոնին և գիտե՞ս թե ինչու. ճիշտ մեր ինչին համար»[19]։

1878 թ. նորից ապստամբության դրոշ է պարզում Զեյթունը։ Այդ ժամանակ է, որ Սրվանձտյանցին հետաքրքրում է անգլիացի սպա Զեմսայթի «Ուլնիո. հորինած քարտեզը»[20], չնայած դեռ պարզված չէ, թե հատկապես ինչի համար։

Սրվանձտյանցը երբ իմանում է պարտված Զեյթունում կառավարության հիմնած զորանոցի մասին, սրտի կսկիծով նշում է նաև Սասունում զորանոց ստեղծելու կառավարության որոշման փաստը. «Մեր Սասնո լեռները զորանոց շինել որոշեցին ամենեն ամուր տեղերը և Տերսիմը պետք է կործանեն, կհիշե՞ք մեր դաղափարները այս լերանց և քրդաց մասին»[21]։

1879 թ., 17 տարի բացակայելուց հետո, Խրիմյանը վերադառնում է Վան՝ ընտրվելով առաջնորդ։ Այդ ժամանակ Սրվանձտյանցը Ակնի առաջնորդն էր։ Հայրիկին պետք էր իր հասունացած աշակերտի օգնությունը, և Ակն են թռչում

---

16 «Փորձ», 1879, № 4, էջ 165։
17 Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, հ. 1, էջ 270։
18 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 3-րդ բաժին, գ. 51։
19 Նույն տեղում, 12-րդ բաժին, գ. 10524։
20 ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆ., 2-րդ բաժին, գ. 73։
21 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 12-րդ բաժին, գ. 10527։

Ներսես Վարժապետյանի կոնդակը և Հայրիկի հրավեր նամակը։ Սրվանձտյանցը, առանց կտրվելու Ակնի առաջնորդությունից, նշանակվում է Վանի առաջնորդական փոխանորդ։ Քաջատեղյակությունը գավառին և վարչական ունակությունները հնարավորություն են տալիս նրան հմտորեն վարել Վասպուրականի ազգային գործերը, իսկ Խրիմյանը կատարում էր սոսկ վերին հսկողի դեր՝ հետևելով սովելոց հանձնաժողովի գործերին։ Սրվանձտյանցին հաջողվում է այնպիսի անկախ դիրք ձեռք բերել Վանի մեջլիսում, որ գրգռում է նահանգապետ Հասան փաշայի զայրույթը[22]։

«Արծվի Վասպուրականի» 10-ամյա աշխատանքը, միացյալ ընկերությունների բացած վարժապետանոցը, գյուղերում բացված վարժարանները տվել էին իրենց արդյունքը. Վանի արթնացած երիտասարդությունը մեծ ջերմությամբ զբաղվում էր ազգային կյանքով։ Պատերազմից հետո Վանում ռուսական փոխհյուպատոս Կամսարականի, Խրիմյանի և միացյալ ընկերության ներկայացուցիչ Վարժապետանոցի տեսուչ Մ. Փորթուգալյանի ներկայությունը նոր զարկ էր տալիս ստեղծված գաղտնի խմբերի աշխատանքին։

Վանում ստեղծված Սև խաչ գաղտնի ընկերության աշխատանքներին տեղյակ էր նաև Գարեգին Սրվանձտյանցը։ Լինելով Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր հայաբնակ նահանգներում, նա ականատես էր հայ ժողովրդի կյանքի օրավուր վատթարացմանը։ Հակառակ այն ժամանակվա հասարակական գործիչների մեծ մասին, նա ոչ մի հույս չէր տածում եվրոպական պետությունների միջոցով Հայաստանի ազատագրման հետ։ Նրա միակ հույսը ժողովուրդն էր, որը երկար տարիներ պետք է պատրաստվեր դժնի պայքարին և աշխարհին ապացուցեր իր լինելիության իրավունքը։ Դրա համար էլ նա քննադատական վերաբերմունք էր դրսևորում ազատագրական շարժման այն ղեկավարների նկատմամբ, որոնք իրենց անմիտ ու անհեռատես գործունեությամբ մթնեցնում էին «հայրենասիրական այդ կազմակերպությունների առաջնթացի ուղեծիրը»[23]։ Ջերմորեն կողմնակից լինելով ազատագրական շարժումներին Սրվանձտյանցը դեմ էր ամեն տեսակի ծայրահեղություններին։

Սրվանձտյանցը շարունակում է իր ժողովրդանվեր գործունեությունը նաև հետագայում։ 1886 թ. նա օծվում է եպիսկոպոս Տրապիզոնի թեմի համար։ Այստեղ ևս նույն հարստահարությունները։ Օրդուի գավառի Ջավուշլար գյուղի գյուղացիական հուզումները ևս կապվում են Սրվանձտյանցի հետ։ Գյուղացիներն ըմբոստանում են կառավարության աշարի հարկահավաքների դեմ, որոնք հարկը գանձել էին չափից ավելի։ Գործին միջամտող Սրվանձտյանցը քննիչ է պահանջում կառավարությունից, սակայն քննիչը ևս անցնում է հարկահավաքների կողմը։ Տեղի գայմագամը սև մատնություններ է նյութում Սրվանձտյանցի դեմ։ Ավելի է ուժեղանում կառավարության անվստահությունը Սրվանձտյանցի նկատմամբ։

Կարճ ժամանակամիջոցում Սրվանձտյանցը գործում է Մուշում, փոխարինելով Պոլիս աքսորված Գրիգորիս Ալեքթեյանին. սակայն նորից չի ուշանում քաղաքական մատնությունը։ Վերստին Տրապիզոն վերադարձած Սրվանձտյանցը մատնիչ Չիլզյանի և թուրք զայմագամի ջանքերով հեռացվում է առաջնոր-

22 Տե՛ս «Տարազ», 1892, № 47, էջ 605։

23 Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի Պաշտպան Հայրենյաց կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 220։

գական պաշտոնից և կանչվում Պոլիս[24]։ Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաք Պոլիսը դարձել էր հայ անհնաղանդ հոգևորականների և քաղաքական գործիչների աքսորատեղի։ Այստեղ էլ Սրվանձտյանցը հանգիստ չի նստում։ Հայրենասեր գործիչը պատկանում է այն փոքրաթիվ եկեղեցականների թվին, որոնք Աշրդյանի պատրիարքության տենդոտ օրերին հավատարիմ մնացին ժողովրդի շահերին։

Սրվանձտյանցը մեռավ 1892 թ., 52 տարեկան հասակում։ Նրա ողջ կյանքը եղավ ժողովրդին ծառայելու մի գեղեցիկ օրինակ։ Նա արտահայտեց Արևմտյան Հայաստանի ամենաստվար դասի՝ գյուղացիության խոհերն ու երազանքները։ Գյուղացիության և ժողովրդի շահերի տեսանկյունից էր նա սպանիչ քննադատության ենթարկում թուրք կառավարությանն ու քուրդ ցեղապետերին, դատապարտում ազգային վարչությանն ու պատրիարքարանին, ազգային ժողովում ժամանակ վատնող էֆենդիներին։

Սրվանձտյանցը հավատում էր հայ ժողովրդի ուժերին, վստահ էր, որ նրա ծոցում նիրհած առյուծները կարթնանան և սրբազան ազատությունը ձեռք կբերվի ժողովրդի միջոցով։ Իր ողջ կյանքում նա դրական կողմնորոշում ուներ ազատագրական շարժումների նկատմամբ և նպաստում էր դրանց։ Նա եղավ այն եզակի բարձրաստիճան հոգևորականներից մեկը, որ ոտքով շրջեց ողջ Արևմտյան Հայաստանը և իր գործունեությամբ ու գրչով գալիքի համար կորըստից փրկեց Արևմտյան Հայաստանի կյանքը պատկերող շատ նյութեր։ Ահա թե ինչու իրավամբ մենք նրան դասում ենք մեր ազգային դեմոկրատների՝ Բաֆֆու, Մամուրյանի և մյուսների շարքը։

Г. СРВАНДЗТЯНЦ И НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЕ ДВИЖЕНИЕ ЗАПАДНЫХ АРМЯН

Э. А. КОСТАНДЯН

Резюме

Гарегин Срвандзтянц известен как один из основоположников и виднейших деятелей армянской фольклористики и этнографии. Но до сих пор не освещена его общественно-политическая деятельность. Данная статья посвящена одной из сторон общественно-политической деятельности Г. Срвандзтянца — его отношению к западноармянскому национально-освободительному движению. Используя богатое письменное наследие, сохранившееся в фонде Г. Срвандзтянца, отдельные документы и малоизвестные статьи из его литературного наследия, впервые показывается его активная роль в пробуждении национального самосознания народных масс, его положительное отношение к национальному движению, борьбе против государственных должностных лиц, турецких угнетателей и армянских реакционных деятелей.

24 Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի արխիվ, Երիմյանի ֆ., թղթ. 105, վավ. 208։